«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ»

Փակ Բաժնետիրական Ընկերություն

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021թ.

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ծանոթագրություն 1	11

Baker Tilly Armenia CJSC
22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301
Tel: +374(10) 544-307/309
Fax: +374(10) 562-404
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

29.04.2022
N 012203

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Փ.Գևորգյան

Աուդիտորական ծառայությունների իրականացման
լիցենզիա թիվ 054 տրված ՀՀ ֆինանսների
և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ»
Փակ բաժնետիրական ընկերության Բաժնետիրոջը

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունը, և կից ծանոթագրությունը՝ քաղված «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (Բանկ) 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա աուդիտորական ստուգում անցած ամբողջական ֆինանսական հաշվետվություններից:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններին՝ Ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը պարունակում է հանգամանքի լուսաբանում պարագրաֆ՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափի վերաբերյալ: Հաշվետու ամսաթվից հետո առաջին եռամսյակում Բանկի կանոնադրական կապիտալը համալրվել է 128,002,328 ՀՀ հազար դրամով: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ մեր կարծիքը չի ձևափոխվել:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցումը չի փոխարինում աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցմանը:

Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2022թ-ի ապրիլի 29-ի մեր եզրակացությունում արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական կարծիք: Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները և ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր եզրակացության ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքերի հետևանքները:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ Ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով աուդիտի միջազգային ստանդարտ 810 «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ» (վերանայված) ստանդարտին համապատասխան մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել կարծիք այն մասին, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններին:

Աուդիտոր

Լ. Ղևոնդյան

29.04.2022թ.

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	**2021թ**	**2020թ**
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ		59,502,623	54,099,796
Տոկոսային և նմանատիպ ծախսեր		(44,049,196)	(38,381,374)
Զուտ տոկոսային եկամուտներ		15,453,427	15,718,422
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		5,720,106	7,250,865
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		(2,205,155)	(2,022,728)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		3,514,951	5,228,137
Զուտ առևտրային եկամուտ		7,271,277	3,845,245
Արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ/(վնաս)		(4,303,796)	3,352,637
Այլ եկամուտներ		4,246,864	3,323,701
Արժեզրկման ծախս		(39,114,103)	(19,298,377)
Անձնակազմի գծով ծախսեր		(5,572,719)	(5,902,196)
Հիմնական միջոցների մաշվածություն		(1,384,750)	(1,049,512)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա		(428,252)	(403,146)
Այլ ծախսեր		(3,544,691)	(4,436,206)
Գործառնական շահույթ		(23,861,792)	378,705
Շահութահարկի գծով ծախս		3,853,689	(290,702)
Տարվա շահույթ		(20,008,103)	88,003
Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում			
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի		(3,081,388)	1,639,917
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**(23,089,491)**	**1,727,920**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2021թ-ի դրությամբ

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	**31 դեկտեմբերի 2021թ.**	**31 դեկտեմբերի 2020թ.**
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		54,385,807	87,914,454
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		14,738,754	30,359,941
Հաճախորդներին տրված վարկեր		565,239,862	635,054,512
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		7,730	70,317
Ներդրումային արժեթղթեր			
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր		30,213,792	680,321
- Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր		125,325,567	66,652,356
Հիմնական միջոցներ		12,064,146	12,704,383
Ոչ նյութական ակտիվներ		1,931,006	2,151,160
Հետաձգված հարկային ակտիվ		7,015,388	1,529,091
Բռնագանձված ակտիվներ		7,866,678	6,174,931
Այլ ակտիվներ		4,344,842	4,504,277
Ընդամենը՝ ակտիվներ		**823,133,572**	**847,795,743**
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		91,668	171,409
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		228,711,786	191,449,030
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ		767,544	627,692
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ		556,659,294	603,633,107
Թողարկված պարտքային արժեթղթեր		10,872,660	2,916,675
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		334,244	185,242
Այլ պարտավորություններ		3,076,204	3,102,925
Ընդամենը՝ պարտավորություններ		**800,513,400**	**802,086,080**
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ		42,090,187	42,090,187
Գլխավոր պահուստ		917,427	913,027
Այլ պահուստներ		(465,840)	2,615,548
Չբաշխված շահույթ		(19,921,602)	90,901
Ընդամենը՝ սեփական կապիտալ		**22,620,172**	**45,709,663**
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		**823,133,572**	**847,795,743**

Արտավազդ Սարգսյան
Վարչության նախագահ

Բեսիկ Եղիազարյան
Ֆինանսական տնօրեն/Գլխավոր հաշվապահ

29.04.2022թ.

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Իրական արժեքի պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**42,090,187**	**913,027**	**2,147,024**	**468,524**	**90,901**	**45,709,663**
Տարվա շահույթ	-	-	-	-	(20,008,103)	(20,008,103)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների իրական արժեքի զուտ փոփոխություն(ներառյալ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխությունները)	-	-	(3,081,388)	-	-	(3,081,388)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	**(934,364)**	**468,524**	**(19,917,202)**	**22,620,172**
Հատկացում պահուստին	-	4,400	-	-	(4,400)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	**4,400**	-	-	**(4,400)**	-
Հաշվեկշիռը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**42,090,187**	**917,427**	**(934,364)**	**468,524**	**(19,921,602)**	**22,620,172**

Հազար ՀՀ դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Իրական արժեքի պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**40,010,409**	**797,803**	**507,107**	**471,422**	**2,304,473**	**44,091,214**
Տարվա շահույթ	-	-	-	-	88,003	88,003
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների իրական արժեքի զուտ փոփոխություն(ներառյալ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխությունները)	-	-	1,639,917	-	-	1,639,917
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**-**	**1,639,917**	**-**	**88,003**	**1,727,920**
Վերագնահատված հիմնական միջոցների ապաճանաչում	-	-	-	(2,898)	2,898	-
Հատկացում պահուստին	-	115,224	-	-	(115,224)	-
Ներդրումներ կապիտալում	2,079,778	-	-	-	-	2,079,778
Շահաբաժիններ	-	-	-	-	(2,189,249)	(2,189,249)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	**2,079,778**	**115,224**	**-**	**-**	**(2,304,473)**	**(109,471)**
Հաշվեկշիռը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**42,090,187**	**913,027**	**2,147,024**	**468,524**	**90,901**	**45,709,663**

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	2021թ	2020թ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	(23,861,792)	378,705
Ճշգրտումներ		
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	1,813,002	1,452,658
Արժեզրկման ծախս	39,114,103	19,195,587
Առևտրային գործիքների իրական արժեքի փոփոխությունից զուտ (օգուտ)/վնաս	(2,299,107)	3,285,318
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից զուտ (օգուտ)/վնաս	(429,311)	(1,674,836)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների ձեռքբերումից և/կամ վաճառքից (օգուտ)/վնաս	(74,215)	(81,922)
Ստացվելիք տոկոսներ	(54,354,821)	(39,361,728)
Վճարվելիք տոկոսներ	3,577,571	3,213,845
Արտարժույթի փոխարկումից (օգուտ)/վնաս	4,303,796	(3,352,637)
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	(32,210,774)	(16,945,010)
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	62,587	(4,115)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,944,141	1,774,291
Հաճախորդներին տրված վարկեր	52,288,997	(110,069,886)
Բռնագանձված ակտիվներ	(1,691,747)	(1,916,425)
Այլ ակտիվներ	(559,476)	(1,845,506)
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	(79,741)	160,695
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	37,262,756	116,746,907
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական պարտավորություններ	-	(32,311,889)
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	139,852	(369,970)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	(14,911,890)	70,416,107
Այլ պարտավորություններ	(26,721)	132,401
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից ստացված մինչև շահութահարկը	54,217,984	25,767,600
Վճարված շահութահարկ	(792,375)	(766,893)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	53,425,609	25,000,707
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		

Հազար ՀՀ դրամ	2021թ	2020թ
Ներդրումային արժեթղթերի վաճառք	(88,280,897)	(59,365,671)
Հիմնական միջոցների առք	(489,633)	(1,045,414)
Ոչ նյութական ակտիվների առք	(208,220)	(298,535)
Հիմնական միջոցների վաճառք	25,180	195,063
Ներդրումներ բաժնետիրական կապիտալում	-	2,079,778
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(88,953,570)	(58,434,779)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ֆինանսական կազմակերպ. վարկերի և ավանդների ստացում/(մարում)	(3,782,635)	24,847,642
Պարտքային արժեթղթերի թողարկում	8,867,841	(7,856,836)
Ֆինանսական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	5,085,206	16,990,806
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	(30,442,755)	(15,676,373)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ	87,914,454	108,885,305
Դրամական միջոցների գծով ակնկալվող պարտքային կորուստների ազդեցությունը	(42,338)	(10,952)
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(3,043,554)	(5,283,526)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ	**54,385,807**	**87,914,454**

Ծանոթագրություն 1

Սույն Անկախ Աուդիտորի Եզրակացությանը կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և կից ծանոթագրությունը, քաղված են Բանկի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից՝ պատրաստված համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Սույն Անկախ Աուդիտորի Եզրակացությանը կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում ամբողջ պարզաբանող տեղեկատվությունը, որը ներկայացված է ամբողջական ֆինանսական հաշվետվություններում, մասնավորապես, հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող տեղեկությունները, որոնց բացահայտումը պարտադիր է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը կարելի է ստանալ Բանկի ղեկավարությունից՝ ըստ պահանջի: